№ 42 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 28 — 1908 — ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 28 № 42

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-ՐԴ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամսվայ համար	„ „	10 ր.
11 „	„ „ „	„
10 „	„ „ „	9 ր.
9 „	„ „ „	8 ր.
8 „	„ „ „	7 ր.
7 „	„ „ „	6 ր.
6 „	„ „ „	„
Մնացած ամիսները ամսական Մէկ բուբլի		
Ամերիկա տարեկան	„	6 դօլլար
Եւրոպա „	„ „	30 ֆրանկ
Պարսկաստան „	„	10 բուբլի

Հնաղանդ, Պատուական, Ներսէս և Աննա Ոսկանեանցները խորին վշտով յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին՝ առաջինն իր որդու, երկրորդն ու երրորդն իրանց թանգագին եղբօր և վերջինն իր տագերի

ՄԻՔԱՅԷԼ ՈՍԿԱՆԵԱՆՑԻ

եղեռնական մահը, որ տեղի է ունեցել իր եղբօր խանութում ծառայող երկու հոգու և այլ մարդասպանների ձեռքով վրիժառութեամբ՝ փետրվարի 17-ի գիշերը Մախաթի սարի վրա։
Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ ամսիս 24-ին կիրակի օրը, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցուց դէպի Խօջիվանքի գերեզմանատուն։
Պատարագն սկսվելու է առաւօտեան ժամը 10½-ին։

ԳԼԽԱՒՈՐ ՄԱԳԱԶԻՆ

Պ. Ս. ԴՈՐՕԺՆՕՎԻ

ՍՕԼՕԼԿԵԱՆ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ԳՈՒՐԳԷՆՕՎԻ

ՏԷԼԷՖՕՆ № 583

Սեզօնը վերջանալու պատճառով և սեզօնի նորութիւնները նորից ստանալուց առաջ

ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի Ց ՄԻՆՉԵՒ ՄԱՐՏԻ 2-Ը

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ԱՀԱԳԻՆ ԷԺԱՆԱԳԻՆ ՎԱՃԱՌՔ

ՄԻՄԻԱՑՆ ՎԵՑ ՕՐՈՎ

այսինքն փետրվարի 25, 26, 27, 28, 29-ին և մարտի 1-ին։
Անցեալ սեզօնի բոլոր ապրանքները ծախվում են մինչև 40% պակաս նստիմնալ արժողութիւնից։

ՄԱՆԱՒԱՆԴ ԶԱՐՄԱՆԱԼԻ

ԷԺԱՆ

կը ծախվեն կահկարասիքի կտորեղէններ, պօրտիէրներ, չիքիլայի վարագոյրներ, պատուհանի տիւլ, դորգեր, թաւշեայ սփռոցներ, հիւրասենեակի սփռոցներ և այլն։
Ծախու կը դրվեն մեծ քանակութեամբ մահուդի ապրանք, բրդեայ և մետաքսեայ կտորներ, չէթ գունաւոր կտորներ, ձմեռվայ վերմակներ, քաթանէ և սեղանի սպիտակեղէն։ Անհագին քանակութեամբ մնացորդներ, տղամարդկանց և կանանց պատրաստի սպիտակեղէն, շալեր, գործած թաշկինակներ և գուլպեղէնի ապրանք։

ՎԵՐԱԿԱԳՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Մեզ հաղորդում են զանազան տեղերից, որ պանդխտական շարժումը ոչ միայն չէ թուլանում, այլ և օրէցօր աւելանում է։

Շատերը, որոնք դիմացել էին մի կերպ գիւղում և աշխատել էին տեղական պաշարներով ապահովել իրանց կարիքը, այժմ ուղևորվում են դէպի քաղաքները ապրուստի միջոցներ հայթայթելու համար։

Ճիշտ է, լեռնային շրջանների մեծագոյն մասում դեռ չեն սկսվել երկրագործական աշխատանքները և մի քանի շաբաթ գիւղացիները դեռ ազատ են պարտաւորական գործերից, բայց անհրաժեշտ է, որ գնացողները կարողանան ժամանակին վերադառնալ և ձեռնամուխ լինել երկրագործական զբաղմունքներին։

Եւ մեծ կորուստ կը լինի տեղական անտեսութեան համար, եթէ աշխատաւոր ձեռքերը կը պակասեն գարնան պարապմունքների ժամանակ և հողը չի մշակվի մեծ տարածութեամբ կամ այնպիսի խնամքով, որպիսին կարևոր է տնտեսութեան ողջ ընթացքի և արդիւնագործութեան հաւաք։

Եթէ առաջիկայ գարնան և ամառը մենք ենթակայ լինենք նոյն դժբաղդութեան, ինչ որ ունեցանք անցեալ տարի, երբ անկարող եղանք մշակել հողերի մեծ մասը և կրճատեցինք սերմանվող հողերի տարածութիւնը, այն ժամանակ մենք նորից կանգնած կը լինենք տնտեսական դժուարութիւնների առաջ և նորից մեր առաջ կը դայ մեր ժողովրդին հաց և սերմացու մատակարարելու խնդիրը։

Վերջին տարիների դառն փորձութիւնները ցոյց տուին, որ մեր ժողովրդական մասսաների բարեկեցութիւնը սարսափելի կերպով վտանգվում է, երբ երկրագործական տնտեսութիւնը խանգարվում է։ Եւ հասկանալի է թէ ինչու։ Որովհետև երկրագործութիւնը հարիւր հազարաւոր մարդկանց աշխատանքի աղբիւրն է կազմում, և թէև նոր աճող ու զարգացող կապիտալիզմը սկսում է կամաց-կամաց աշխատաւորը ոյժեր գրաւել դէպի ինքը, բայց և այնպէս ներկայումս դեռ նա չէ այն գլխաւոր ասպարէզը, որ հայթայթում է ժողովրդին նրա ապրուստի միջոցների մեծագոյն մասը։

Քանի կը շարունակվի երկրագործութեան այն բաքայված և վտանգված դրութիւնը, որ բաժին է դարձել մեր երկրին, այնքան մեր ազգաբնակութիւնը ենթակայ կը լինի ծանր աղէտների և փորձութիւնների։

Մեր գիւղական ժողովուրդը պէտք է ամէն միջոց գործ դնէ վերակենդանացնելու իր քայքայված գիւղատնտեսական արդիւնագործութիւնը, իսկ մեր ինտելիգենտ գործողները պէտք է աջակցեն ժողովրդին այդ կարևոր գործը կատար ածելու։

Դա հերթական և էական մի խնդիր է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 21 փետրվարի

Ինչպէս յայտնեց տեղական մամուլը, Կովկասի Փոխարքայի միջնորդութեան համաձայն, ներքին գործերի մինիստրութիւնը փոխադրեց 200,000 ր. այն 1,900,000 բուբլի գումարից, որ Պետական Դուման բաժին հանեց Անդրկովկասի անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեանը սերմացուի և ուտելիքի համար։

Ցիշեալ 200 հազար բուբլին Փոխարքայի կարգադրութեամբ ստորաբաժանված է հետեւեալ կերպով, այժմ և եթէ տալու այն տեղերի ազգաբնակութեանը, ուր առանձնապէս մեծ է ուտելիքի և սերմացուի կարիքը և հրամայողական պահանջ է զգացվում բաւարարութիւն տալու նրան. Թիֆլիսի նահանգապետի տրամադրութեան տակ —15,000 բուբլի, Շերնօմօրեան նահանգապետի՝ 5000 բուբլի, Դանձակի նահանգապետի՝ 30,000 բուբլի և Երևանի նահանգապետի՝ 130,000 բուբլի։

Մնացած 20,000 ր. ժամանակաւորապէս պահվելու է Փոխարքայի դիւանատան մօտ և կը յանձնվի, երբ սերմացուի և ուտելիքի անակնկալ սուր կարիք երևան գայ։

—

Էջմիածնից մեզ հաղորդում են հետեւեալ կարևոր լուրերը.

Յայտնի կապիտալիստ և բարեգործ Ալէքսանդր Յ. Մանթաշեան՝ Պարիզից յանուն տեղապահ Դէորդ արքեպիսկոպոս Սուրէնեանի գրած մի նամակով յայտնում է, որ որոշելով վերանորոգել Էջմիածնի տաճարը, խնդրում է կազմել ձեռնհաս անձերից և ճարտարապետներից մի մասնաժողով, մշակելու համար վերանորոգութեան պլանը և նախագիծը։

Ցանկալի էր, որ, արդարև, կազմվէր մի ձեռնհաս մասնաժողով, որը կարողանար, օգտվելով Մանթաշեանի խոշոր նուիրաբերութիւնից, վերականգնել Էջմիածնի տաճարը իր նախկին ձևով և չքացնէր այն վանդալական աղաւաղումը, որ գործ է դրվել այդ տաճարի գլխին Խրիմեանի օրով։

Միւս կողմից՝ Բագւում մի խումբ անձինք որոշել են տալ 100,000 բուբլի և այդ գումարով առատ ջուր հանելով ուռուցել Էջմիածնապատկան հողերը, որպէսզի Էջմիածնի վանքը, ստանալով բաւական եկամուտ իր հողերի բերքերից, այլ ևս պէտք չունենայ մուրացկանութեամբ դիմելու հայ ժողովրդին իր բիւջէտի ծախքերը ծածկելու համար։

—

Ուրմի, 14 փետրվարի

Թիւրքերի ներկայացուցիչ Թահիր-փաշայի և պարսիկների Մօտաշամ-Սալթանէի ամենօրեայ բանակցութիւնները սահմանային հարցի վերաբերմամբ ինչքան և դաղտնիք են պահվում, սակայն համաձայնութեան յոյսը թուում է չքացած, որովհետև երկու պետութիւնների զինուորական շարժումները մօտաւոր պատերազմի անխուսափելիութիւնն են հաստատում։

Բայց և այնպէս, երկու պետութեան ներկայացուցիչները սիրալիր հրաւէրքների և սերտ յարաբերութիւնների շրջանառութեան մէջն են։

Այս բոլորից յետոյ պարզամիտ մարդիկ դժուարանում են հաւատալ՝ թէ անհամաձայնութիւնը կառաջացնէ պատերազմ։ Բայց թղթի միւս երեսում այլ բան ենք կարդում...

Թիւրք զինուորականները հատ-հատ կենտրօնանում են քաղաքումս։ Մի քանի օր առաջ Խոյի շտաբանդարը և երէկ Մաւանա գիւղից միրալայը բաւական դիմաւորողներով ընդունվեցին քաղաք։

Այնպէս որ ներկայումս թիւրք զինուորականները այստեղ քաղաքում բաւական ստուար թիւ են կազմում և մանրակրկիտ ծանօթանում քաղաքի հետ...

Միւս կողմից պարսից կառավարութիւնը ամէն կողմից զօրքեր է կենտրօնացնում Միանդաբի կողմերը, պրինց Իսմայել-Կուլի Միրզայի զօրավարութեամբ, ուր և գտնվում է Քարմանքարմայի զօրաբանակը։ Սպասում են թէհրանից նաև նոր զօրախմբերի՝ միահամուռ արշաւելու Սօվուջ-Բուլաղի վրա, ուր այժմ իշխում է օսմանցին իր նշանակած պաշտօնակալներով։

Հրապարակի վրա միւս այլ պատող զրոյցները շատ-շատ են, բայց մենք մեզ օրէնք ենք վերցրել վերապահութիւնը։

Արզար Տէր-Եսայեան

—

Պետերբուրգ, 19 փետրվարի

Ռուսաց սինոդը տեղեկացրեց կոմս Լ. Ն. Տոլստոյին, որ եթէ նա հրաժարվի իր վարդապետութիւնից, սինոդը պատրաստ է յետ վերցնել իր բանադրանքը։

Պետական Դումայի նախագահ Խոմեակովը տեսակցութիւն ունեցաւ մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինի հետ։ Խօսակցութեան նիւթն էր պետական նախահաշիւը։

Պարզվեց, որ Մեծ Իշխ. Ն. Նիկոլայէվիչի կեանքի դէմ մահափորձողներից նա, որը իրան ցոյց էր տուել իբրև իտալացի, Մարիո Կալվինօ անունով, ոչ թէ իրօք իտալացի է, այլ ռուս ուսանող Լեբեդինսկի ազգանունով։ «Ռ.»

—

Բերլին.—«Վոլֆի» գործակալութեան հեռագրում են Թէհրանից, որ առաւօտեան ձերբակալվել են չորս հոգի այն ըսպէին, երբ կամեցել են անցնել թիւրքաց սահմանը։ Նրանցից մէկը խոստովանեց, որ, յիրաւի, իրանք էին ուրբաթ օրը ռումբ նետողները։

Թէհրան.—Ձերբակալված են 6 հոգի, որոնք փետրվարի 16-ի մահափորձի պարագուլներիցն են։

Թաւրիզ.—Միանդաբից հեռագրում են, որ թիւրքական վերջին զօրքերը հեռացան Սօվուջ-Բուլաղից։ («Ռ.»)

—

Վիէննա.—«Գօր. Բիւրօյին» Կ. Պոլսից հեռագրում են, որ աւստրօ-ունգարական դեսպանը ամենաեռանդուն կերպով պնդեց մեծ վեզիրի առաջ, որ Բ. Դուռը պատասխան տայ մեծ պետութիւնների հաւաքական նօտային, թէ արդեօք մտադրութիւն ունի երկարելու բարենորոգումների խնդրով զբաղվող մարմինների լիազօրութիւնները թէ ոչ, ինչպէս և զինելու ժանդարմերիան արագաձիգ կարաբիններով և մաուզէրներով։

—

Պետերբուրգ, 21 փետրվարի

Գեներալ-մայոր Ֆօլբաումը նշանակված է Բաղուի ոստիկանապետ։

Մօսկվայի դատաստանական պալատին են յանձնվում հարիւր հոգի, գլխաւորապէս բարձր կրթական հաստատութիւնների սաներից, որոնք պատկանում են սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան։ («Ռ.»)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ռուս կառավարութիւնը արտասահմանեան իր ներկայացուցիչներին ուղարկեց հրահանգիչ հեռագիրներ՝ Բալկանեան թերակղզում երկաթուղի կառուցանելու հարցի վերաբերութեամբ։

Հրահանգում յիշատակվում է, որ երբ Վիեննայի կաբինէտը յայտնեց ռուս կառավարութեան, որ ինքը մտադիր է երկաթուղի կառուցանել Բոսնիայի սահմանի և Միտրովիցայի միջև, միևնոյն ժամանակ աւելացրեց, որ նա հետաքրքրում է սոսկ Բալկանեան թերակղզու տնտեսական դրութիւնը բարւոքելուն։ Իր կողմից ռուս կառավարութիւնը հանապազ մեծ հետաքրքրութեամբ է վերաբերվել դէպի Բալկանեան թերակղզու ազգաբնակութեան և պետութիւնների տնտեսական զարգացումը և կարծում է, որ այն երկաթուղագծերի կառուցումը, որոնք միացնելու են այդ թերակղզու զանազան մասերը միմեանց հետ և բանալու են նրանց ազատ մուտքը դէպի հարևան ծովերը, կը նպաստէ անշուշտ յիշեալ երկիրների խաղաղ զարգացման և առաջադիմութեան։

Ոչ մի անձնական նպատակ կամ շահ չունենալով, Ռուսաստանը մինչև օրս ձեռնպահ է մնացել և այսուհետև էլ այդպէս կը լինի Բալկանում որևէ երկաթուղային մենաշնորհ ձեռք ձգելուց իր օգտին, սակայն ռուս կառավարութիւնը պատրաստ է աջակցել ամէն մի երկաթուղային նախագծի, որպիսին ընդունակ է ծառայել վերոյիշեալ նպատակին։

Որովհետև սերբ կառավարութիւնը դիմեց ռուս կառավարութեան, խնդրելով պաշտպանել իր նախագիծը այն երկաթուղու, որ նա մտադիր է անցկացնել Դանուբի և Ադրիական ծովի միջև, կ. Պոլսի ռուսաց դեսպանին հրաման է ուղարկված՝ աջակցութիւն ցոյց տալ յիշեալ նախագծին Բ. Դրան առաջ։

Ռուս կառավարութիւնը համոզված է, որ դժուարին չի լինի համաձայնեցնել և յարակցել գործնականապէս Բալկանեան թերակղզում զանազան երկաթուղիներ անցկացնելու նախագծերի շօշափած առանձին շահերը, նոյնօրինակ համակրանքով կը վերաբերվի առայժմ դէպի երկաթուղային նախագծերը, որոնք կարող կը լինեն յարուցանել Բալկանեան պետութիւնները առանձին-առանձին, և այդօրինակ նախագծերին միանման դիպլոմատիական աջակցութիւն ցոյց կը տայ։

Վերջում յոյս է յայտնվում, որ մեծ պետութիւնները կընդունեն վերոյիշեալ հայեացքները և չեն մերժի ռուս կառավարութեան իրանց աջակցութիւնը ցոյց տալու այն քայլերի վերաբերութեամբ, որ Ռուսաստանը հարկադրված կը լինի անել Կ. Պոլսում յիշեալ մտքով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երևան, 17 փետրվարի

Այսօր թեմական դպրոցի ուսուցչական խումբը կազմակերպել էր Շահազիզի և Պոչեանի յիշատակին գրականական ցերեկոյթ, որը, ինչպէս և այս դպրոցում եղած բոլոր ցերեկոյթները, լինում են առհասարակ հասարակութեան համար ձրի և բոլորովին մատչելի։ Բաւական ընդարձակ դահլիճը լիքն էր երկսեռ հասարակութիւնով և հայ դպրոցի ուսուցչուհիներով, ուսուցիչներով և աշակերտներով։ Աշակերտների մէջ նկատելի էին ուսուցչական սեմինարիայի բարձր

Ամենամեծ խնդիրն է, որ ինքնաբերաբար ոչ միայն ոչ մի գրաքննություն չի գործում, ոչ միայն ոչ մի գրաքննություն չի գործում, ոչ միայն ոչ մի գրաքննություն չի գործում,

Այդ յանձնաժողովին մասնակցելու համար երկրագործության գլխաւոր կոմարը Կովկասի լիազօրի կողմից նշանակված է գիւղատնտես Տիմոֆէյեվը։

✦ Թիֆլիսի բուսաբանական այգին մրցելու համար նշանակված է 5 կօպէկ վճարելու։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

(Բագուի լրագիրներից)

—

✦ Բագուի արքունական պալատի կառավարիչը հերթականապէս (էքստէրնօ) յայտնեց Բագուի քաղաքապետին, որ քաղաքը տեխնիկական դպրոցի պահպանման համար պարտական է 78,500 ռուբլի վճարել, ուստի և խնդրում է հարկադրել քաղաքային ինքնավարութեան՝ շուտով յանձնել այդ գումարը պետական գանձարանին։

✦ Հարաւ-արևելեան երկաթուղագծի վրա սոսկալի ձիւնային մրրիկների պատճառով, քաղաքում շատ մթերքների խոշոր պակասութիւն է զգացվում։ Այսպէս, չը նայած որ պաս է, ներկայումս ոչ մի խանութում անարատ իւղ չէ ճարվում։ Սերուցքը (սմէտան) և մակարոնը (տվօրօգ) ֆունտը ծախվում է 25 և 40 կօպէկով։ Անասելի չափով բարձրացել է նաև խաւարը, որի ֆունտը վաճառվում է 6 ռուբլով, չը նայած որ նա ստացվում է Կասպիական ծովից։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Նիժնի-Նովգորոդի բօրսայում եռանդով ստորագրութիւններ են ժողովվում բօրսային ընկերութեան բոլոր անդամներից, որպէսզի միջնորդութիւն յարուցվի գումարելու հանրաւորական մի հանգանակ՝ նաւթի թանգութիւն դէմ միջոցներ մշակելու մասին խորհելու համար։ Մի յատուկ պատգամաւորութիւն է ընտրված առևտրի ու արդիւնաբերութեան, ֆինանսների և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրներին անձամբ զեկուցագիր ներկայացնելու համար։

✦ Ինչպէս հաղորդում է «О. Н.» լրագիրը, Օդեսայի գներալ-նահանգապետ գեն.-մ. Տօլմաչեվը սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան թռուցիկ խմբից ստացել է մի սպառնական նամակ, որ վիճակ է ընկել նրան կեանքից զրկվելու, և առաջարկվում է նրան ընդմիշտ հեռանալ Օդեսայից։ Սակայն գներալ Տօլմաչեվը դրականապէս վճռել է, ինչպէս նա յայտնել է մամուլի ներկայացուցիչներին, մնալ իր տեղում՝ ամեն տեսակ սպառնալիք աչքի առաջ ունենալով հանդերձ։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Փետրվարի 20-ին Թիֆլիսի դատաստանական պալատի երկրորդ քրէական տեսնում սկսեց քննվել նախկին պրիստաւ Ալէքսանդր Շուտովի գործը։ Մեղադրական ակտը կազմված է քրէական պատժագրքի 377-րդ յօդուածով, որի մէջ յիշատակված է, որ Շուտովը մեղադրվում է կաշառակերութեան մէջ։

Մեղադրեալին պաշտպանում է երդ.-հաւ. Լ. Սամարկին։ Քննութիւնը դռնփակ է։ Երկու կողմից վկաներ կանչված են մօտ 40 հոգի։

—

Թիֆլիսի դատաստանական պալատում, ինչպէս յայտնի է ընթերցողներին, փետրվարի 21-ին նշանակված էր «Ցառաջ» լրագրի նախկին խմբագիր Աւ. Սահակեանի գործը։ Սակայն քննութիւն չեղաւ, որովհետև մեղադրվողի պաշտպան երդ.-հաւ. Մուրավիէվը ճանապարհի ձիւնային մրրիկների պատճառով չը կարողացաւ իր ժամանակին Թիֆլիս հասնել։ Պալատը որոշեց գործը յետաձգել։

—

Մերվ, 8 փետրվարի

Ամսիս 7-ին այստեղ Տաշկենտի դատ. պալատը քննեց Ալէքսանդր Շախկալամեանի գործը, որին անցեալ տարի մեղաւոր էր ճանաչել քրէական դատարանը՝ զրկելով բոլոր իրաւունքներից և դատապարտելով 7 տարի աքսորման, ճանաչելով մեղաւոր հետևեալ յանցանքի մէջ։ Ստուկէն և ընկ. կառավարիչ պ. Բօտին, մօտ երկու տարի առաջ գանձարանից ստանալով 72 հազար ռուբլի և քաղաքում բաժանելուց յետոյ, իր մօտ մնացած 6 հազար ռուբլին գրպանում, սեփական կառքով տուն վերադառնալիս, ճանապարհին յարձակվում են 3 մարդիկ, սրերով վիրաւորում են նրան և կողոպտում 6000 ռ., որի մէջ իբր մասնակից են եղել Ալէքսանդր Շախկալամեանը, Բէգլար Արզումանեանը և կառապան Գրիգոր Բագիրեանը, որոնք դէպքը պատահած օրը բռնվում են։ Բէգլար Արզումանեանը բանտում արդէն վախճանված է, իսկ Շախկալամեանին և Գրիգոր Բագիրեանին պալատը ճանաչեց բոլորովին արդար։ Գործը պաշտպանում էր երդուեալ-հաւատարմատար Կլանկը։

ՄԱՄՈՒԼ

Ամսիս 21-ին Թիֆլիսում սկսեց հրատարակվել «Գործ» անունով գիտական, մատենական, հասարակական և գրական մի երկշաբաթաթերթ խմբագրութեամբ և հրատարակութեամբ Մ. Ստամբոլցեանի և աշխատակցութեամբ մի քանի երիտասարդ գրողների, որոնց անունները (Բ. Իշխանեան, Ռ. Սամուէլեան, Ա. Ռուբէնի, Գ. Պիճիկեան, բժ. Տ. Իսախանեան և Եսայեմ) յայտնի են «Մշակի» ընթերցողներին և հայ հասարակութեան։

Նոր թերթը չէ հետևում այն նոյն սկզբունքի օրգանների օրինակին, որոնք հէնց առաջին համարից մեծադղորդ խոստումներով և շլացուցիչ ածականներով յայտնում են իրանց գոյութիւնը, այլ իր հասարակական աշխարհահայեացքի, իր profession de foi-ի մասին թողնում է գատողութիւն կազմել իր ապագայ գործունէութեան հիման վրա։ Այդպէս հաճեսատօրէն սկսելով իր գործունէութիւնը, նոր թերթը ուրիշ է տալիս յուսալու, որ նա կը հանդիսանայ մի հանդէս, որ կը ձգտէ իր օյժերի չափ շօշափել գիտական, մտաւորական, հասարակական և գրական-կենսական խնդիրներ ու երևոյթներ, ինչպէս մտադիր է։

Այդողութիւն ենք ցանկանում այդ ասպարիզում։

Առաջին համարում տպված է պ. Բ. Իշխանեանի մի նոր ուսումնասիրութիւնը «Դաշնակցութիւնը ռուսահայերի մէջ» վերնագրով, իբրև պատմա-քննական վերլուծութիւն, որ խոստանում է բաւական հետաքրքրական լինել։

*

Նոյն օրը լոյս տեսաւ հայ մամուլի մի նոր օրգան, «Խարազան» վերնագրով երկշաբաթաթերթ։

Խմբագրական յօդուածի մէջ նոր թերթի խմբագրութիւնը յայտնում է, որ նա ասպարէզ է իջնում «ժողովրդի բարօրութիւնն ընդունելով իր հիմնաքարը, ժողովրդի շահերն ունենալով իրեն զօրավիդ», և վերջացնում է յօդուածը այս խօսքերով. «Խարազանը» իւր դրօշակը հիւսելով լուսաւորութեան անմաղ թելերից հանդէս է գալիս հայի ծարաւ սիրտն ու միտքը կրթելու, դաստիարակելու և առաջ մղելու...»։

Սպասենք և տեսնենք...։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Իգդիր, 12 փետրվարի

«Վտակի» Թղթակից պ. Իգդիրցին երևի անձնական թշնամութիւնից կուրացած «Վտակի» հաւարներում գոհարներ է շարում ինձ անուանարկելու համար՝ վաշխառու կոչելով ինձ և այլն։ «Վտակի» խմբագրութիւնն էլ հրաժարվում է իմ հերքումը-բացատրութիւնը տպելուց, երևի նրա համար, որ մէջտեղում «վաշխառու» բառկայ։

Փոքր ի շատ է բանիմաց մարդը երևի կը հասկանայ, որ մանր վարկի ընկերութիւնները հիմնվում են բացառապէս վաշխառուների դէմ կռուելու համար, որպիսին հիմնվելով Սուրմալուում, և ես լինելով նոյն ընկերութեան խորհրդի անդամ՝ երբէք չեմ խնայել իմ նիւթական աջակցութիւնը յիշեալ ընկերութեանը ճգնաժամերից ազատ պահելու համար։ Եւ կարող եմ ապացուցել, որ Իգդիրցու յօդուածները լոյս տեսնելուց առաջ և այժմս էլ իմ չորս հազար ռուբլին ծառայում է ընկերութեան օգտին $4^1/_2$ տոկոսով, որին ոչ մի վաշխառու երբէք չի համաձայնի։

Ուրեմն ես այնպիսի վաշխառու եմ, որ գիտակցօրէն նպաստում եմ վաշխառութեանս դէմ կռուող հիմարկութիւններին։

Թողնելով Իգդիրցու և «Վտակ» լրագրի հետ խօսելը դատարանում, պարտք եմ համարում յայտնել ընթերցողներին, որ վաղուց բաղմաթիւ նամակներ եմ ստացել փող կորզելու սպառնալիքներով, որ ինձ համար նշանակութիւն չեն ունեցել։

Արսէն Նիսանեան

—

Թիֆլիս, 11 փետրվարի

Ողորմութիւն խնդրել, ժամանակ անժամանակ ուրիշներին անհանգստացնել, բան լինել—այս բոլորը անպատւաբեր համարելով մեզ համար, և որպէսզի ապագայում ևս նոյն դառնութիւնները չը ճաշակենք և մեր գիւղացիութիւնը ապահովված լինի, դիմեցինք մի քանի կուլտուրական միջոցների. հիմնեցինք Ղազախի գաւառի Ղալաչա գիւղում գիւղական-համայնական շտեմարան, բայց մեր նիւթական սղութեան պատճառով՝ դիմեցինք զանազան քաղաքներում գտնված մեր հայրենակիցներին և բարեգործ անձանց և ստացանք 252 ռ. 50 կ., որոնց անունները անցեալ տարի լրագրում հրատարակվեց։ Այժմ նոյն նպատակով ստացել ենք 30 ռուբլի Բաթումից՝ ժողովված մեր հայրենակից պ. Յարութիւն Մարտիրոսեանցի ձեռքով, որ նուիրել են մի քանի անձինք։

Նախկինների հետ ընդհանուր գումարն է 282 ռ. 50 կօպէկ, որից ծախսված է 143 պուդ սերմացուի՝ 227 ռ. 80 կօպ., մնացել է ամբարի և աղբիւրի օգտին 54 ռ. 70 կ.։ Շնորհակալութիւն յայտնելով պ. պ. նուիրատուներին, խնդրում ենք բարեգործ անձանց այսուհետև ևս չը խնայել ուղարկելու իրանց լուսան հետևեալ հասցէով. Ներսիսեան գպրոց, Համբարձում սարկաւագ Քարիմեանցին։

Մանաժողովի անդամներ՝

Մելքիսեդէկ քահ. Տէր-Մելքիսեդէկեանց,
Համբարձում սարկաւագ Քարիմեանց

—

Կարչեն ինկվիզիտօրները

Թիֆլիս, 17 փետրվարի

Կարդալով «Մշակի» № 38-ի մէջ Թ. Նարիմանի ծեծի մասին, որ գործ է դրել Երևանում դաշնակցական Մուշեղը, մենք յայտնում ենք մեր զզուանքն այն գռեհիկներին, որոնք մարդավայել պատասխանի փոխարէն դիմում են ինկվիզիցիայի բոլոր միջոցներին...

Ցոյս ունենք, որ այն բանաւորները, որոնք գտնվում են նոյն Դաշնակցութեան մէջ, կը բարձրացնեն իրանց բողոքի ձայնը այդ և նման յաճախ կրկնվող գազանութիւնների դէմ, եթէ միայն այդ բանաւորները հասել են գիտակցութեան, ըմբռնում են դասակարգային կռուի նշանակութիւնը...

Բանաւոր Մէջս, Եվդոկիա, Գարբս Ադամով, Արշակ Մերաբով, Ներսէս Խաչատրեան, Կասսօ, Գրիգոր Յովակիմեան, Բուլուսով, Вартановъ, Վ. Շաուսով, Георгій, Աբրահամ, Գէորգ, Մ. Տիրացեան, Գ. Բացախեան

ԱԿԱՄԱՑ ՊԱՏԱՍԽԱՆ

(Նամակ խմբագրութեան)

—

Թիֆլիս, 22 փետրվարի

Սուտը այնքան վարագուրել է մեր կեանքը, որ ամեն մի «արուս» ունեցող մարդ միայն մի հնար ունի ազատ մնալու լիրը զրպարտութիւններից և սուտ բանադրանքներից, և այդ միակ հնարը մեր հասարակական գործերին չը մասնակցելն է ու ասպարէզը սոված մարդասպաններին և մարդկային պատկերը կորցրած արարածներին թողնելն է։

«Վտակ» թերթի № 41-ի մէջ Բագուից տպագրված է մի կեղծ ստորագրութեամբ յօդուած, որի ոչ թէ ամեն մի տողը, այլ ամեն մի տառը սուտ է։ Յօդուածագիրը խօսում է «Բակու» և «Բակ. Էхо» լրագիրների մասին և այնպէս է պատկերացնում գործը, որ կարծես թէ մի օրվայ ժամանակաւոր խմբագիր Մանուչարեանի և իմ մէջ կոնֆլիկտ է տեղի ունեցել, որ յաղթութիւնը մնացել է Մանուչարեանին,—բայց ի հարկէ ես պիտի յաղթեմ և խմբագիր դառնամ, որովհետև ես «ճարպիկ» մարդ եմ։ Այս բոլորին ինձ մօտ է Մանուչարեանի նամակը Խատիսեանին գրած, ուր նա ասում է թէ նա ենգիբարեանի դէմ ոչինչ չունի։ Ենգիբը նրանումն է, որ երբ պիտի փակվէր «Бакинское Эхо»-ն և «Баку» լրագրի անցեալ տարվայ իրաւունքը իմ անունով էր և ես չէի կամենում իմ անունով լոյս ընծայել թերթը. ես, Ենգիբարեանս, առաջինը առաջարկեցի Մանուչարեանին ժամանակաւոր խմբագիր կարգել մինչև հասատատ մարդ գտնելը։ Ինքը Մանուչարեանը ոչ մի կերպ հերքել այս հանգամանքը չէ կարող. որովհետև նրան ոչ ոք չէր ճանաչում, ես նրան առաջարկեցի, և իմ սեփական ձեռքով գրեցի խնդիր նրան առաջարկելու և Մանուչարեանը հաճայնեց առանց որևէ պայման դնելու. բայց երբ որ մի համար նրա ստորագրութեամբ դուրս եկաւ և նա կամեցաւ հրատարակիչ ևս լինել՝ նրան մերժեցին առանց իմ գիտութեան, որովհետև վճիռ կար, որ հրատարակչութեան իրաւունքը պիտի մնայ կուլտուրական միութեան ձեռքին։

Այսպիսով ես եմ Մանուչարեանին առաջարկել խմբագիր, և ուրեմն նրա յաղթութեան մասին խօսք չի կարող լինել։ Որ ես երբէք չեմ ցանկացել խմբագիր լինել և միշտ կարճ ժամանակով և առանց որևէ վարձատրութեան յանձն եմ առել միմիայն թերթը դադարման չենթարկելու համար՝ սրա ապացոյցը այն է, որ ես ինքս Մանուչարեանին առաջարկեցի և այժմս էլ փետրվարի 20-ին ես արդէն տուեցի պ. Բահաթրեանին հաստատելու։ Փետրվարի 18-ի առաջին համարը իմ ստորագրութեամբ լոյս տեսաւ, իսկ 20-ին ես արդէն ուրիշին առաջարկեցի։ Ուրեմն ինչ խօսք կարող է լինել, որ ես «ճարպիկ» եմ և խլել եմ Մանուչարեանից, որին ոչ ոք չէր ճանաչում և ես եմ նրա անունը մէջտեղ բերել։ Նամակի միւս կէտերը նոյնպէս ստոր ստի յիրաբանքներ են, որ թերթը դէֆիցիտ է տալիս՝ այս հանգամանքը ամենից քիչ ինձ է վերաբերում, որովհետև «Баку» և «Бакинскія Извѣстія» թերթը տասնեակ տարիներ դէֆիցիտ են տուել, երբ որ նրանց տէրերը՝ պ. Անտոնեանը, Կրասիլնիկեանը, Սարգսեանը, Թառայեանը և ուրիշները հարիւր հազար են կորցրել, իսկ ես միայն երկու ամիս եմ խմբագրել և ոչ մի առնչութիւն չեմ ունեցել տնտեսական մասի հետ, որը ունեցել է ուրիշ կառավարիչ. ես միայն ձրի եմ աշխատել։ Անցեալ տարվայ յունիսից մինչև այս տարվայ յունվարը թերթը վարել են Հ. Մ. և Համբարձում Մելքումեանը և վեց ամսվայ մէջ նրանք հինգ հազար ռուբլի նպաստ են ստացել կամ պարտք են արել։ Սրանցից Մելքումեանը ամսական ստացել է հարիւր յիսուն ռուբլի։

Սուտ է, որ «Каспій» լրագիրը եօթ հազար բաժանորդ ունի, որովհետև ես կարող եմ ապացուցանել, որ տարեկան տասն հազարի չափ դէֆիցիտ է տալիս այդ լրագիրը։ Սուտ է, որ այժմ «Баку» լրագրի տարածման քանակը ընկել է, որովհետև 1907 թուի դեկտեմբերին, երբ որ խմբագրատանը նստած էր մի անյայտ պարոն՝ Մելքումեանը, թերթը ընկաւ մինչև 2800 հատարի, իսկ այսօր չորս հազարից անցնում է, և այս բոլորը կարելի է ապացուցանել դոկումէնտներով։ Եթէ կեղծ Sphint ստորագրութեամբ վախկոտ յօդուածագիրը չապացուցանէ, որ խլել եմ Մանուչարեանից թերթը, որ ես երբևիցէ մի կօպէկ վարձատրութիւն եմ ստացել խմբագրութիւնից, որ այժմ թերթը աւելի քիչ է տարածվում քան անցեալ տարվայ երկրորդ կիսին, երբ ուրիշ մարդիկ են ղեկավարել գործը,— ես այդ յօդուածագրին իրաւունք ունեմ անուանելու չարամիտ ստախօս և ստոր բանարկու։ Ինչ վերաբերում է անցեալ տարվայ աշխատակիցներին, որ ինձ հետ կոնֆլիկտ ունեցան, այս մասին Բագուի դաշնակցական կոմիտէն յայտարարել էր լրագիրներում, որ նրանց դատը իմ դէմ պիտի պաշտպանէր, բայց գործին ծանօթանալուց յետոյ՝ հրաժարվեց պնդելու իր որոշման վրա, և մենք ոչ մի զիջում չարեցինք ոտից մինչև գլուխ մեղաւոր և հայ ժողովրդի շահերին ոչ-բարեկամ մարդկանց պահանջներին։ Կարծես յօդուածագիրը մի մեծ ամսաթղթակ կորցրած լինի իմ շնորհիւ. բայց ես այնուամենայնիւ երբէք ոռճիկ չեմ ստացել և չեմ ստանալու։

Խմբագիր-հրատ. «Баку» լրագրի՝

Գ. Ենգիբարեան

ՌՈՒՍԱՀԱՅ ԿԵԱՆՔՈՒՄ ԴՈՐԾՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1907 ԹՎԻՆ

I

Ընթերցողների համար մի շատ օգտակար սովորութիւն է, որ մեր հայ թերթերն ևս, հետևելով օտարազգի լրագիրներին, անահերկու տարի է, ինչ տալիս են կեանքի գանազան ասպարէզների վրա հին տարվայ ընթացքում կատարված իրողութիւնների ամփոփ յիշատակութիւնն ու գնահատութիւնը *)։ Այդ իրողութիւններից անշուշտ աւելի կարևորութիւն ունեն քաղաքական ու կուսակցական կեանքում կատարվածները, որոնց տարբեր տեսակէտներից արված բազմակողմանի լուսաբանութիւնը անպայման կարևոր է մեր կեանքում, սրտեղ սովորաբար տարիների ընթացքում կարծիքների սարկային միատեսակութիւն է տիրում, կարևոր է յատկապէս հէնց ներկայ օրերում, որովհետև անցեալ տարվայ մեծ մասում ու այս տարվայ սկզբում կառավարական ճնշումների ու այլ պատճառների շնորհիւ ոչ բոլոր կուսակցական հոսանքները են կարողացել արտայայտվել, որի շնորհիւ դէպքերն ու անցքերը միակողմանի, հետևաբար և անցանկալի նկարագրութիւն ու գնահատութիւն են ունեցել։ Այս հանգամանքը նկատի ունենալով, նաև այն, որ նոյն իսկ այլ, հակառակ աշխարհահայեացքի թերթերում 1907 թուի կուսակցական կեանքի նկարագրութիւնը թերի է եղել, մի կողմ թողած դեռ ևս սխալ լինելը, վստահանում ենք օգտվել «Մշակի»՝ հիւրասէր էջերից ռուսահայ կեանքում 1907 թուին գործող կուսակցութիւնների կեանքի դէպքերն ամփոփ նկարագրելու և որոշ արժէքաչափի ենթարկելու նպատակով, թէև արդէն մի ամսից աւելի հեռու ենք նոր տարվայ սկզբից։

Մեր այս յօդուածի մէջ չենք խօսելու այնպիսի ուղղութիւնների մասին, որպիսիք են «պահպանողական-ազգայինը» և «հայդեմօկրատականը», որոնք, ճիշտ է, իբրև հոսանքներ գոյութիւն ունեցել են անցած տարի, բայց իբրև կազմակերպված ամբողջութիւն հանդէս չեն եկել մեր կեանքում, ուստի մեր ասելիքը վերաբերվելու է Դաշնակցութեանը, Հնչակեան կուսակցութեանը, «Երիտասարդ-դաշնակցականներին» և Ռուսաստանի սոցիալ-դեմօկրատիային։

II

Դաշնակցութեան համար տարվայ սկիզբը ազէտալի ու հիասթափեցնող եղաւ, որովհետև այդ կուսակցութիւնը Կովկասի բանւորութեան երեք խոշոր կենտրոններում—Բագուում, Թիֆլիսում ու Բաթումում—երկրորդ Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ սեացաւ. իսկ այս սեացումը զգալի էր, շատ զգալի դաշնակցականների ինքնասիրութեան համար մանաւանդ այն պատճառով, որ առաջին Պետական Դումայի ժամանակ այնչափ յոխորտացել էին, որ եթէ իրանք մասնակցեին ընտրութիւններին, անպայման յաղթութիւնը կը տանէին։ Որքան էլ որ նրանք ցանկանային ցոյց տալ, որ իրանց կսկիծը գաւառների յաղթութիւններով մեղմացել են, այնուամենայնիւ հաւատացող չը կար, որովհետև բոլորն էլ գիտէին, որ գաւառներում ընտրվելը յաղթութիւն չէր այն պատճառով, որ կազմակերպված հակառակ պայքար ոչ մի ուրիշ կուսակցութիւն չէր վարել այդ վայրերում։

Պետական Դումայի ընտրութիւններից յետոյ Դաշնակցութիւնն սկսեց յուզվել կուսակցութեան ամբողջութիւնը պահպանելու խնդրով, որը վերջնականապէս պէտք է վճռվէր կուսակցութեան IV համագումարում, որը գումարվեց արտասահմանում։ Ինչպէս յայտնի է, Դաշնակցութիւնը ունէր աջ ու ձախ թեւեր և կենտրոն. սրանցից առաջինը, աջ թեւը, մերձանականները, բուն, հին Դաշնակցութեան հաւատարիմները պահանջում էին «Կովկասեան գործունէութեան նախագծի» վերացումը, ուրիշ խօսքով՝ պահանջում էին շարունակել ընթանալ, ինչպէս նախ քան 1905 թուը. ձախ թեւը, անջատականները, որոնց մասին առանձին խօսք կը լինի քիչ յետոյ, պնդում էին, որ պէտք է անջատել անդր ու այսր-սահմանեան գործունէութիւնները՝ Կովկասում գործելով իբրև սոցիալիստ-բեվօլիւցիօներ. իսկ կենտրոնը ցանկանում էր պահպանել թէ հին գործունէութիւնը և թէ «նախագիծը»։ Համագումարում յաղթեց կենտրոնը շնորհիւ թիւրքահայ պատգամաւորների զարմանալիօրէն հնթարկվող ու կամակատար լինելուն, պատգամաւորներ, որոնցից շատերի համար անկասկած միանգամայն նորութիւն պէտք է թուար սոցիալիզմին վերաբերող որևէ խօսք։ Ի՞նչը կարող էր աւելի ուրախալի լինել, քան այս մի սոցիալիստի համար, որ տեսնում էր, թէ սոցիալիստական գաղափարների առաջ խորտակվում է, կերպարանափոխվում նոյնիսկ մի այնպիսի կազմակերպութիւն, որպիսին էր այս, «հայկական կօլօն», որ իր ամբողջ գործունէութեան ընթացքում ամենակատաղի հակասոցիալիստն է եղել։ Ի՞նչը կարող էր աւելի ուրախալի լինել, քան այս սոցիալ-դեմօկրատների համար, որոնք տեսնում էին, որ այդ բոլորը անում են դաշնակցականները այն պատճառով, որ գիտեն, թէ եթէ այդպէս չը վարվեն, ապա իրանց լսող բազմահազար ամբոխը պէտք է երես շուռ տայ իրանցից և դիմէ դէպի սոցիալ-դեմօկրատիան։ Իսկ այս կարծիքը, թէ դաշնակցականներին այդ վերջին հանգամանքն էր որ ամենից շատ դրդեց նոր կուրս սկսելու, արտայայտել է նոյնիսկ նրանց ֆրանսիացի բարեկամ Պիեռ Քիառը, որի յօդուածի թարգմանութիւնը լոյս տեսաւ հէնց իրանց օրաթերթում։ Վիեննայի համագումարում Դաշնակցութիւն կուսակցութիւնը, հաստատեց, որ ինքը սկսում է խմել այն ջրհորից, որի մէջ նա թքում էր 15 տարի շարունակ և թքում է այն ջրհորի մէջ, որից խմում էր դարձեալ 15 տարի շարունակ։

Երրորդ նշանաւոր դէպքը այդ կուսակցութեան կեանքում Շատուգարտի միջազգային սոցիալիստական համագումարին իբրև ռուսական սեկցիայի էս-էրական ենթասեկցիայի անդամ մասնակցելն էր, որը եղաւ շնորհիւ Ռուսաստանի սոցիալ-դեմօկրատների կողմից կատարված մի մեծ թիւրիմացութեան։ Վերջիններս սխալմամբ, հնչակեանների տեղ դնելով դաշնակցականներին ու կարծելով, որ սրանք արդէն մասնակցել են Ամստերդամի համագումարին, իրաւունք չեն համարել արգելք լինել նրա ռուսական սեկցիայում տեղ ունենալուն։ Մինչդեռ, ինչպէս յայտնի է, ոչ թէ սրանք էին, որ մասնակցեցին Ամստերդամի համագումարին, այլ հնչակեանները՝ իրանց ներկայացուցիչ ունենալով Պլեխանովին։ Զուարճալին այնքան այս թիւրիմացութիւնը չէ, որքան Դաշնակցութեան՝ սոցիալիստական միջազգային բիւրոյին ներկայացրած իր գործունէութեան մասին զեկուցումը, որը, ինչպէս տեղեկութիւններից երևում է, կըրկնութիւն է այն աչքակապութիւնների, որոնցով շէֆերը ճգնում էին ապացուցել անցեալում իրանց սոցիալիստ ու իրանց ծրագրի սոցիալիստական լինելը, ծրագիր, որի մէջ սոցիալիզմի գոյութիւնը նոյնքան ճիշտ է, որքան Մաղօնայի մազի գոյութիւնը այն իտալացի քահանայի ձեռքում, որը իր ձեռքերի լրկ ցուցամատերը միմեանց կպցնելով բարձրացնում ու հաւատացնում էր ուխտաւորների բազմութեան, թէ ով արդար է, նա կը տեսնի իր մատերի արանքում Տիրամօր մազը։

Երրորդ Պետական Դումայի ընտրութիւններին Դաշնակցութիւնը չը մասնակցելով... մասնակցեց, բայց այս անգամ դաշնակցական պատուիրակների թիւը, համեմատած միւս կուսակցութիւններին պատկանող պատուիրակների թիւի հետ, շատ աւելի փոքր տոկոս էր կազմում, քան անցած տարի, և պատահականութիւն էր, որ մի դաշնակցական ընտրվեց պատգամաւոր։

Այս կուսակցութիւնը տարին վերջացրեց հայրիկովշչինայի գլխաւոր հերոսը կամ, ինչպէս սուր նկատել է մէկը, մեռելների սազանդարը «դառնալով»։

Գաւառներում այս կուսակցութիւնը եռ է դառնում դէպի այն սահմանները, որոնց միջից դուրս էր եկել. այսինքն այժմ գաւառներում նա մի կազմակերպութիւն է, որ երիտասարդների փոքրաթիւ խմբեր միայն ունի իր ետևում, իսկ ժողովուրդը արդէն բոլորովին դուրս է եկել նրա ձրկնորսական կորտված ցանցերի միջից։

Դաշնակցութիւնը Շելլերի «Վիլհելմ Տէլլի» զառամեալ բարօն Ատտինգհաուզէնի նման կարող է ասել իր մասին.

«Իմ ժամանակը արդէն գետնի տակն է, և ես էլ շուտով պէտք է հետևեմ նրան»։

Թադ. Աւդալբէգեան

*) Այսպիսի ամփոփումներից մի հատ լոյս տեսաւ «Վտակում» «Ռուսաց գրականութիւնը 1907 թուին» վերնագրով և Աւ. Խ.-ի ստորագրութեամբ. սակայն այդ յօդուածը թարգմանութիւն է «Наша Вѣкъ» թերթի առաջին համարներից մէկում տպված նոյն վերնագիրը կրող յօդուածի։ Ընդհանրապէս մեր յարգելի բանաստեղծն ել է սկսել պլագիատով զբաղվել, թէ՞ նրա էլ գրածի «չարուածքի մի մասը թափվել է», ինչպէս այդ պատահեց հերաւ. պ. Թոփչեանին... Թ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆՑՔԵՐԻՑ

XI *)

Թաւրիզ, 31 յունվարի

Ֆարման-Ֆարմայի զեկուցումը **)

Մուսաակ-Սուլթանի միջոցով արտաքին գործերի մինիստրին։ Ահա վեցերորդ օրն է, ինչ անհնազանդ քիւրդերը Սօվուջ-Բուլաղի և Միանդաբի միջև հաղորդակցութիւնը փակել են, և ես ոչ մի լուր չունեմ Թեհրանից Միանդաբ խփված հեռագիրների մասին։ Տեղիս այժմեան ավիճակը նկարագրելով՝ գիշերով, քիւրդ սուրհանդակի միջոցով, ուղարկեցի Միանդաբ, բայց կասկած չեմ, թէ նամակս տեղ կը հասնի անվնաս թէ ոչ։ Եթէ գրածս ապահով կերպով հասել է Միանդաբ, ապա ձեզ հեռագրված կը լինի, և դուք տեղեկացած կը լինէք Մուքրու դրութեան մասին։

*) Տես «Մշակ» № 37.

**) Դեկտ. 29-ին Ֆարման-Ֆարման Սօվուջ-Բուլաղից սոյն զեկուցումն է ուղարկել Միանդաբ, որպէս զի այնտեղից Թեհրան հեռագրվի։ Զեկուցումը Սօվուջ-Բուլաղից Միանդաբ է հասցրել մի քիւրդ սուրհանդակ լեռնային կածաններով։

Միանդաբում եղած ժամանակ Ֆէրիկի՝ ինձ ուղղած նամակի բովանդակութիւնն արդէն հեռագրել եմ ձեզ։ Նա աշխատում էր ինձ վախեցնել, որպէս զի Միանդաբից դէպի Սօվուջ-Բուլաղ չը շարժվէի։ Բայց երբ տեսաւ, որ իր բաղձանքին չը հասաւ, և ես, արհամարհելով իր նամակը, եկայ այստեղ,—ուրիշ ծրագիրներ կազմեց։ Նախ աշիրաթներին սովորեցրեց Սօվուջ-Բուլաղի և Միանդաբի միջև ճանապարհը փակել։ ապա նրանք շահսօվանների վրա յարձակում գործեցին և սպանութիւններ կատարելով ցիրուցան արին նրանց։ դարձեալ Ֆէրիկի դրդմամբ՝ ժամաշները յիշեալ վնասված շահսօվանների անասունները քշեցին։ Ֆէրիկը մամաշներին դիտմամբ դրդեց այդ քայլն անելու, որպէս զի մեր ուտելու պաշարը սպառվի և իմ արամադրութեան տակ գտնված ձիաւոր ու հետևակ զօրքը Սօվուջ-Բուլաղում քաղցի ազդեցութեան տակ՝ ապստամբվի։ Աշիրաթները նոյն իսկ վերջերս ուղտերով ուղարկված ալիւրն ու դարին ճանապարհին բռնելով գրաւեցին։

Այս բոլորի մասին ամսիս 3-ին (դեկտ. 27-ին) Ֆէրիկին նամակ գրեցի։ Այդ գրութեանս պատճէնը սուրհանդակի միջոցով ուղարկել եմ Միանդաբ, որպէս զի ձեզ հեռագրվի։ Ի հարկէ ստացած կը լինէք այդ հեռագիրը։

Իմ յիշեալ նամակին Ֆէրիկը հետևեալ պատասխանը տուեց, որը նոյնութեամբ արտագրում եմ հեռագրումս. «Պատուական գրութիւնդ ստանալու պատիւն ունեցայ։ Այդ գրութեան մէջ ակնարկում էիք, թէ սպասում էք ձեր՝ յատուկ մարդով ուղարկած նամակի պատասխանին։ Այդ պատասխանը դեռ չեմ ստացել։ Երկու մեծ պետութիւնների միջև գոյութիւն ունեցող բարեկամութիւնն անկասկած մշանջենաւոր է։ Միայն թէ՝ Թաւրիզից ձեր մեկնելն ու բազմաթիւ զօրքով այդտեղ հասնելը Քիւրդըստանի միւսիւլմաններին երկիւղ ու անհանգստութիւն է պատճառել։ Այդ առիթով իր ժամանակին խորհուրդ տուի ձեզ Միանդաբից առաջ չը շարժվել, բայց ցաւում եմ, որ խնդիրս չը յարգեցիք։ Այժմ ստիպված եմ կրկին աղաչել, որ, յանուն խաղաղ ժողովրդի հանգստութեան, վերադառնաք Միանդաբ, որպէս զի միւսիւլմանների միջև կրօնական պատերազմ տեղի չունենայ, և խնդիրը, որ յանձնված է կօմիսիայի քննութեանը, իր վախճանին հասնի խաղաղ ճանապարհով։ Մէհմէդ Ֆազլը Ֆէրիկ, կօմանդանը հրդուդ, եավէր հաղրէթը շէհրիարի»։

Անցեալ օր, ամսիս 4-ին (դեկտ. 28-ին), մանկուս, մամաշ, զէհբօքրի և այլ ցեղերի մեծերն ու աղաները մի նամակով դիմել են շէյխ-իւլ-իսլամին, դաղիներին, կալուածատէրերին ու Սօվուջ-Բուլաղի ամբողջ հասարակութեանը։ Այդ նամակի բովանդակութիւնից պարզ կերպով երևում է, որ այդ գրութիւնը Ֆէրիկի կարգադրութեամբ է գրված։ Նոյնպէս և այդ գրութիւնը նոյնութեամբ զետեղում եմ հեռագրումս՝ ի գիտութիւն ձեր. «Հաջի Խալիլ հաջի Լութֆուլլահի և հաջի Վէսաբի միջոցով՝ շէյխ-իւլ-իսլամին, դաղիներին, կալուածատէրերին, վաճառականներին, արհեստաւորներին և Սօվուջ-Բուլաղի ամբողջ բնակչութեանը յայտարարում ենք հետևեալը։ Մենք և բոլոր միւս աղաները, 20,000-ից աւելի ձիաւորներ ունենալով մեր տրամադրութեան տակ, թիւրքաց կառավարութեան կողմից նշանակված ենք՝ Ֆարման-Ֆարմայիին քաղաքից դուրս հանելու։ Եւ որովհետև Սօվուջ-Բուլաղի բնակիչներիդ հետ շատ վաղուց բարեկամ ու հարևան ենք եղել և միևնոյն ժամանակ կրօնակից ենք, այդ պատճառով չենք ցանկանում, որ ձեր կեանքին ու գոյքին վնաս հասնի, անմեղ երեխայք ու կանայք ոտնատակ դնան ու փչանան։ Ուստի բարեկամաբար բացորոշ կերպով յայտնում և խորհուրդ ենք տալիս ձեզ, որ Ֆարման-Ֆարմայիին քաղաքից անմիջապէս հանէք. և թող նա ուր ուզում է գնայ ապահով կերպով։ Եթէ, Տէրը մի արասցէ, այս նամակում գրվածը չը գործադրէք, այդ դէպքում բոլորդ՝ բացի տնից-տեղից զրկվելուց՝ կանուանարկվէք թէ այս և թէ հանդերձեալ աշխարհում։ Բանը բանից անցել է։ Աստուած ոչ անէ. եթէ մեզանից 1000 ձիաւոր իսկ քաղաքում մեռնելու լինի, դարձեալ մենք յետ չենք ընկրկի մեր վճռից։ Սա մեր վերջին նամակն է։ Հաստատ իմացէք. եթէ մեր բազմաթիւ ձիաւորները քաղաք մտնելիս նոյնիսկ մի քիչ արիւն թափվի, այն ժամանակ ոչ ոք չէ կարող մեր հսկայ բազմութեան առաջն առնել։ Եթէ սիրում էք Աստուծուն, ապա անմեղների ու խեղճերի արեան թափվելուն պատճառ մի լինէք։ Այժմ ամէն ինչ կախված է ձեր կամքից ու որոշումից։ Այլևս աւելորդ ենք համարում աւելի նեղութիւն պատճառել ձեզ։ Մամադ հաջի էլխանի՝ Բայազիտ մանկուռների մեծը. Համզա Սուլէյման՝ ժամաշների մեծը. Մամատաղին՝ Գատր-աղայի որդին. Սամսամ Սուլթան՝ Գատր-աղայի որդին. Մամատ Բափիր աղա Մանկուռ»։

Թէ այս և թէ Ֆէրիկի ինձ գրած նամակների բովանդակութիւնից պարզ երևում է, որ այդ երկու նամակներն էլ միևնոյն անձնաւորութեան խմբագրածն են։ Ֆէրիկի նպատակն է իր կրօնակիցներին իմ դէմ զինել և ապստամբեցնել։

Սօվուջ-Բուլաղ քաղաքի բնակիչների կողմից, որոնց թիւը 20,000-ի է հասնում, չը նայած որ Ֆէրիկի կրօնակիցներն են, երէկ երեկոյ ինձ մօտ եկան շէյխ-իւլ-իսլամը, դաղիները, վաճառականները, կալուածատէրերը, պաշտօնեաները, արհեստաւորներ և այլ դասակարգերի ներկայացուցիչներ և դուրանը կնքելով երդուեցին, որ քանի շունչ ունեն՝ պարսից պետութեան հպատակութիւնից դուրս չեն գայ։ Սօվուջ-Բուլաղի բնակիչների կողմից կնքված այդ դուրանն այժմ ինձ մօտ է։

Մեր հարևանի ձեռնարկած գործն անհիմն է ու խախուտ։ Նրա նպատակն ու ցանկութիւնն այն է, որ ես Սօվուջ-Բուլաղից հեռանամ։ Իսկ եթէ այստեղից հեռանամ, այդ դէպքում Պարսկաստանն այլևս ճղաթից այս կողմը հողի տէր չէ լինելու։ Պարսկահպատակ մամաշ ցեղն այժմ Ֆէրիկի մօտ է՝ Համզա Սուլթանի զեկավարութեամբ։ Բայազիտ, մանկուռ, փիրան, գէուրք, զուտի, շամսադինլու, մուքրի, զեհրօքրի ցեղապետները և աղաները 20,000 ձիաւորներով Սօվուջ-Բուլաղից 2—3 մղոն հեռու գտնվող գիւղօրայքում ինձ շրջապատել են։ Ես կարծում եմ, որ, եթէ յիշեալ ցեղապետներն առաջ խաղան և Սօվուջ-Բուլաղի վրա յարձակվեն, այդ դէպքում պէտք է դիմադրել։ Տեսնենք մեր երկուսից ով յաղթող կը լինի։

Արտաքին գործերի վսեմ. մինիստր, դուք ևս դիւանագիտական ճանապարհով անմիջապէս ձեռք առէք անհրաժեշտ միջոցները, որպէսզի Ֆէրիկին արգիլվի այլևս այսպիսի միջոցների դիմելու։ Խնդրում եմ, իմ անհիրի մասին հաճէք անմիջապէս կարգադրել և անհրաժեշտ պատասխանը տալ գրութեանս։

Թաւրիզի հեռագրական վարչութեանը խնդրում եմ, որ հեռագրիս մի պատճէնը յանձնի Թաւրիզի անջումանին, իսկ մի պատճէն էլ Ուրմի հեռագրի Մօհթաշամ-Սալթանէին։ Ֆարման-Ֆարմա։ Y.

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

ԲԵՐԼԻՆ։ Բալկանեան երկաթուղային նախագծերի մասին հրատարակված ռուս կառավարութեան նօտան շատ բարեյաջող տպաւորութիւն է թողնում այստեղ։ Կառավարական շրջաններում ընդգծում են Ռուսաստանի բարեկամական վերաբերմունքը դէպի միւս շահագրգռված պետութիւնները և նօտայի խաղաղասիրական տոնը։

ԲԵՐԼԻՆ։ Պրուսական լանդտագում լեհ պատգամաւոր Շտիխելը յայտնեց, որ լեհական օրինագիծը կոպիտ ոյժն է սահմանել. նա և նրա համախոհները բողոքում են կառավարութեան, որ լեհերին զրկում է բանական (ինտելլեկտուալնի) և նիւթական զարգացման հնարաւորութիւնից։

Ֆինանսների մինիստր Բէյնբաուէնը ի միջի այլոց ասաց, որ լեհերը պրուսական թագաւորներից բարեգործներին շարունակ ապստամբութիւններով են պատասխանել. լեհերը Պրուսիայի գերիշխանութեան տակ իլօտներ (ստրուկ) են եղած. դեռ լեհական թագաւոր Լեշչինսկին ասել է, որ ոչ մի ժողովուրդ այն աստիճանի զրկված չէ մարդկային իրաւունքներից, ինչպէս լեհ ժողովուրդը. մենք լեհերին լիակատար բարգաւաճում ենք ցանկանում, բայց պահանջում ենք, որ նրանք բացէ ի բաց ընդունեն, որ պատկանում են պրուսական պետութեան. այդ բանը մինչև օրս չէ եղել. ուստի կառավարութիւնը թոյլ չի տայ, որ արևելեան նահանգներում գերմանական տարրը նեղի և ճնշվի լեհերից։

ԼՕՆԴՕՆ։ «Դէյլի Նիւսին» Զիկագոյից հաղորդում են, որ հրաման է արձակված աքսորել բոլոր յայտնի անիշխանականներին։ 300 անիշխանականներ արդէն ձերբակալված են. խիստ հսկողութիւն է սահմանված յեղափոխական գրուածքների և ճառերի վրա։

Կ. ՊՕԼԻՍ։ Պրիզրէնի 86-ամեայ հրամանատար գեն.-մ. Անէէդ-փաշան վախճանվեց ինֆլուէնցիայից։ Նրա տեղ նշանակված է Սագլի-փաշան։

ԿԷՐՉ։ Վախճանվեց յայտնի ֆաբրիկատէր միլիոնատէր Մեսակուդին։

ՄՕՍԿՎԱ։ Հաժարէմստվային կազմակերպութիւնը որոշից 300,000 բուբլի յատկացնել գաղթողներին օգնելու և 50,000 բուբլի՝ չը նախատեսված պէտքերի համար։

ՍՕՖԻԱ։ Կաբինէտը իշխանուհուն 150,000 ֆրանկ նուիրեց նրա հարսանեաց առիթով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԳՆԵՐԸ

21 փետրվարի 1908 թ.

Տոկոսաբեր արժեթղթեր

Տոմսակ I փոխ. վիճակախազի	335 ր.	50 կ.
Տոմսակ II փոխ. վիճակ.	264 ր.	— կ.
Տոմսակ III փոխ. Ազն. Բանկի	224 ր.	— կ.
4% Պետական Բենատ	74 ր.	62½ կ.
5% փ. Թ. Պետ. Ազն. Հ. Բ.	83 ր.	25 կ.
4½% փ. Թ. Պետ. » » »	78 ր.	25 կ.
4% փ. Թ. Պետ. » » »	72 ր.	— կ.
3½% Գրաւ. Թ. Պետ. » »	60 ր.	25 կ.
5% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	84 ր.	50 կ.
4½% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	77 ր.	50 կ.
4% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	72 ր.	— կ.
5% Ներքին փոխ. 1905 թ. I	95 ր.	75 կ.
5% » » » » II	95 ր.	75 կ.
5% Արտաքին փոխ. 1906 թ.	93 ր.	50 կ.

ԲՕՐՍԱ

Լօնդոնի վրա 10 ֆ. ստ. արժէ	95 ր.	90 կ.
Բերլինի վրա 100 մարկը »	46 ր.	81 կ.
Պարիզի վրա 100 ֆրանկը »	38 ր.	7 կ.
Նաւթ. Թղթ. Նօբել ընկ. »	11,175 ր.	— կ.
Կասպիական ընկ. ակցիա »	4200 ր.	— կ.
Բագուի ընկ. » »	540 ր.	— կ.
Մանթաշեանի » »	149 ր.	— կ.

ԱՆԴՐԿՈՒՂԳ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

Թիֆլիսից Բագու	Բագուից Թիֆլիս
Ընդ. գիշ. 12 ժ. 28 ր.	Ընդ. երեկ. 5 ժ. 02 ր.
Պօստ. երեկ. 9 ժ. 41 ր.	Պօստ. ցերկ. 12 ժ. 21 ր.
Մարդ. առաւ. 7 ժ. 53 ր.	Մարդ. առաւ. 4 ժ. 58 ր.

Թիֆլիսից Բաքում	Բաքումից Թիֆլիս
Մարդ. առաւ. 10 ժ. 58 ր.	Մարդ. առաւ. 10 ժ. 38 ր.
Պօստ. առաւ. 9 ժ. 15 ր.	Պօստ. առաւ. 6 ժ. 49 ր.
Մարդ. երեկ. 11 ժ. 22 ր.	Մարդ. երեկ. 5 ժ. 46 ր.

Թիֆլիսից Երեւան	Երեւանից Թիֆլիս
Պօստ. գիշ. 1 ժ. 8 ր.	Պօստ. ցերեկ. 1 ժ. 18 ր.
Մ.-ապր. ցեր. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ա.գ. 12 ժ. 52 ր.

Կարսից. Ալէքսան.	Ալէքսանդր. Կարս
Պօստ. երեկ. 5 ժ. 48 ր.	Պօստ. ցերեկ. 12 ժ. 23 ր.
*)Մ.-ապր. առ. 5 ժ. 25 ր.	*)Մ.ապր. գիշ. 3 ժ. 09 ր.

Թիֆլիսից Ջուլֆա	Ջուլֆայից Թիֆլիս
Պօստ. գիշ. 1 ժ. 08 ր.	Պօստ. գիշ. 6 ժ. 48 ր.
Մ.-ապր. ցեր. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ցեր. 6 ժ. 54 ր.

*) Այս գնացքները երթևեկում են միայն պէտք եղած ժամանակ։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկախտ.։

Կ. Ի. ԴՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Դ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՆԻՒ“

Գրական, հասարակական, քաղաքական, տնտեսական հանրամատչելի շաբաթաթերթի, որի համարը լոյս կը տեսնի մօտ օրերում։

Բաժանորդագրութեան պայմանները.

Բագուում տարեկան—4 ր., վեց ամիսը—2 ր.
Բագուից դուրս—տարեկան 5 ռուբլի, վեց ամիսը—2 ր. 50 կ.

Դիմել՝ Баку, Редакція „Анивъ“. Типографія Н. А. Эриванцова.

Խմբ.-հրատ.՝ Գր. Բազ.-Աղաջանեան

«ԱՆԻՒԻ» տարեկան բաժանորդները կը ստանան ձրի

„ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ“

Գիտական-քննական ժողովածու

Գիրք I.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Մօմենտը—Խմբագրութիւն.
2. Պատմահայեցողութիւն—Էլվնտ.
3. Սօցիալիստական պրօբլեմներ—Բիւխարդ
4. Սուբիէկտիվ Չոկման թէօրիան—Լ. Ռոստոմեան
5. Զեկուցում և իրականութիւն—Ն. Աստչեան
6. Շտուդարտի կօնգրէսը և գերման սօցիալ-դեմօկրատիան—Յ. Տ.-Օ.
7. Վտանգը աջից—Գ. Շանթուրեան.

Ժողովածուն առանձին կարժենայ 1 բուբլի։

(օ. ժ.) 3—3

Շաբաթ, փետրվարի 23-ին

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Էժանագին և ձրի ճաշարանների և թէյարանների միջոցները աւելացնելու նպատակով

կը տրվի ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

1) «Կամենում եմ իշխանուհի լինել», 2-րդ գործողութիւն, հեղին. Ա. Ծադաբէլու։ Վրացերէն լեզուով։ Մասնակցում են. տ. Գաբունիա-Ծադաբէլի և Վ. Աբաշիձէ։ 2) Կուպլէտներ օրվայ հարցերի մասին, հայերէն լեզուով. կը կատարեն Տէր-Դաւթեանց և Ծարուքիանեանց դերասանները։ 3) Գնչուների երգեր։ Մասնակցում են. Մ. Գ. Գրիգէնկօ և գիտարիստների ու բալալայկայի վրա ածողների նուագախումբը։ 4) Բարեկենդանը Նիցցայում։ Բնորոշ պարեր։ Ծաղիկների պարը։ 25 զոյգերի քայլընթացքը զգեստներով։ Ծաղիկների կոիւը, կօնֆէտտի, սէրպանտին։ Վիճակախաղ։ Petits chavaux։ Վերջում ՊԱՐԵՐ։ Սկիզբը ճիշտ երեկոյեան 9 ժամին։ Տոմսակները 2 ր. 20 կ. արժողութեամբ կանխապէս ծախվում են Massiou-ի քաղցրեղէնների խանութում, «Ռիվիէրա» ծաղկի մագազինում, իսկ երեկոյթի երեկոյեան—մուտքի մօտ։

(Հ. Հ. շ.) 3—3

ԵՐԴՈՒԵՍԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ՋԱՒԱԴ-ԲԷԿ ԲԱԼՈՒՂԵԱՆԸ

վերադարձել է և ընդունում է դործերով ԱՐՄԱՒԻՐՈՒՄ (Կուբանի շրջան), նախկին բնակարանում,—Пожарная д. № 3. телефонъ № 159.

Պօստի հասցէն՝ Присяжному Повѣренному Джавадъ-Беку Балугіанъ.

Հեռագրի հասցէն՝ Армавиръ, Балугіанъ.

ՀՐԱՒԷՐ

Հալաբարի Շամքօռեցոց (Կարմիր Աւետարան) ս. Աստուածածին եկեղեցու երկսեռ ծխականները հրաւիրվում են եկեղեցի այս փետրվարի 24-ի առաւօտեան ժամը 11-ին ժողովի։ Օրակարգի նիւթերն են.—եկեղեցու և ծխական դպրոցի հաշիւների քննելը և եկեղեցապատկան դատարկ հողի վրա կրպակներ կառուցանելու խնդիրը։

Այդ օրը եթէ ժողովականների օրինաւոր թիւ չը լինելու պատճառով ժողովը չը կայանայ, հետևեալ ժողովը կը լինի մարտի 2-ին նոյն տեղը և ժամին։

Երէցփոխ՝ Ա. Տէր-Խաչատրեանց

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

գրավաճառանոցում ստացվել են հետևեալ գրքերը.

Աբրամօվա. Գիւղացին և բանուորը. Գր. Ղարագ. Թիֆլիս 1907 թ. 3 կ.

Լսարան կենցաղագիտ գիտելեաց. Ա. պատմութիւն Աստուածաշունչ սուրբ գրոց. Թէոդոսիա 1861. 1 ր. 50 կ.

Բրակկօ. Պատուաւորներից մէկը. կօմեդիա 1 արար. փոխադր. Կ. Զալալեան. Թիֆլիս, 1902. 15 կ.

Արեղեան Մ. Հայոց լեզուի ուղղագրութիւնը, Թիֆլիս 1892 թ. 50 կ.

Վանդէրվէլդ Է. Բանուոր դասակարգի դրութիւնը Բելգիայում, թարգմ. ռուս. Ա. Պ., Թիֆլիս 1907 թ. 45 կ.

Մարիկ. Լէօ Դարայեան, դրամա 1 գործ. Թիֆլիս 1907 թ. 20 կ.

Խանզադէ Լ. Ներսէսի յիշատակին (թռուցիկ յիշողութիւն. Շօրջայի արիւնոտ անցեալից), Վաղարշապատ 1907 թ. 20 կ.

Կապանաձէ. Գիւղական ուսուցչի ձայնը, թարգմ. Մ. Տ. Շուտ, Թիֆլիս 1907 թ. 15 կ.

Ոգի Հայաստանի. պատկեր գունատիպ, Վենետիկ 50 կ.

Աւարայրի դիւցազները, պատկեր գունատիպ, Վենետիկ 50 կ.

Մօչխուբարիձէ Ա. Ղաչաղ Արսէն, դրամա 3 գործ. թարգմ. վրաց. Ս. Զօրանկարեանց, Թիֆլիս 1907 թ. 20 կ.

Առանձար. Փրկիչներ. թատերախաղ 5 արար. Ալէքսանդրիա, 1906 թ. 60 կ.

Բօէլշէ Վ. Մարդու ծագումը. գերմ. թարգ. Ն. Սարգսեան. Բագու 1908 թ. 40 կ.

Տմբլաչի Խաչան (Կ. Կ. Մէլիք-Շահնազարեանց). Զուտնա-Տմբլա. գիրք Ա. Վաղարշապատ 1907 թ. 1 ր. 25 կ.

Փափազեան Վ. Պատմութիւն հայոց դրականութեան, սկզբից մինչև մեր օրերը, մասն ա. XVII դար, 80 կ.

Օսկենար. Աւեղնագործութիւն, Տրապիզոն 1907 թ. 3 ր.

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галустянцу.

2—1

Նոր լոյս տեսաւ

ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ

ԾԻԾԱՂԱՔԵՐ

Հայրիկ, Պարոնեան, Պլբլբ-Գուղի, Դոշ-Մխիթար, Դանտէ, Լաֆոնթէն, Եղովպոս, Ողոմպիանոս, Մօլլա Նասր-Էդդին, Կրիլով, Բալակիրեվ և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։

182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն,

Անեկդոտներ, 112 երես.

ԳԻՆՆ Է 20 Կ.

Դիմել՝ գրավաճառներին։ Ինձից գումարով պահանջողներին 20% զեղչ և ճաճապարհածախսն իմ հաշուին։

Ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ. Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.

(օ. մ.) 10—4

ԲԺԻՇԿ

Մէլիք-Էյնաբեան

Վենեբական, միզասեռական և մորթու հիւանդութիւններ

Ընդունելութիւն | 9—10 առաւօտ. 5—7 երեկ.

Կանեիեվսկայա փող. № 6, Վեսցել հիւրանոցի մօտ։

(Ե. Հ. շ.) 30—23

Լոյս տեսաւ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

ԿԵԱՆՔԻ ՎԷՊԸ

Գինն է 75 կոպէկ

Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» և «Փարոս» գրավաճառանոցներին։

5—1

Լոյս տեսաւ և վաճառվում է

ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԲԱՐՈՑԱՊԷՍ ԸՆԿԱԾ

և

ԱՄԵՆՔԻՑ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԱԾԻՆ

276 մեծադիր էջ, գինը 50 կոպ.

Դիմել Թիֆլիսի և թէ այլ տեղերի գրավաճառներին, որոնց մօտ կարելի է ստանալ նաև հեղինակի միւս աշխատութիւնները, և կամ ուղղակի հեղինակին՝ Тифлисъ, Орбеліановская, № 24, Левону Вардани Меликъ-Адамянцу. 5—4

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնի

Բ. Իշխանեանի

«ԱԶԳԱՅԻՆ ՊՐՕԳՐԵՍԸ ԵՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՁԱՀԵՐԸ»

աշխատութիւնը (մօտ 300 երես)

(Հ. շ.) 2—2

Լոյս տեսաւ

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԿԱՆՈՆՆԵՐ

Գինն է 40 կոպէկ

Դիմել գրավաճառներին, կամ հեղինակին՝ Ծոմիադզինъ, архимандриту Бабкену.

(Հ. Կ.) 10—7

Մազերի պօմադա

ՄԱՐԻԱ ՆԻԿՕԼՍԿՈՒ

Ճիշտ և անվնաս միջոց մազերը թափվելու դէմ. արագ ամրացնում է մազերը, աճեցնում է և բժշկում է հիւանդ կաշին։ Հէնց այս պօմադան աճեցնում է և փայլ է տալիս ժորուքին և բեխերին։ Գործածելու ժամանակ սրսկել մազերի արմատում և գործածել առնասարակ քիչ-քիչ։ Այս պօմադան թոյլատրված է՝ պատրաստելու և վաճառելու՝ բժշկական բաժնից։ Վաճառվում է Կովկասեան դեղատ. ընկերութեան մէջ և Բասատովի, Բեվազովի և Խիզանովի դեղ. պիտոյքների վաճառանոցներում։ 5—3

Մի փորձված երիտասարդ ՈՐՈՆՈՒՄ Է

արտագրութիւններ, կասսիրի, գործակատարի կամ տների կառավարչի պաշտօն։ Համաձայն է գնալ նաև ուրիշ քաղաքներ։ Հասցէն՝ 8 уч. Свѣчной пер. № 10 Самсону Оганесянъ Акопянцъ. Ունի նաև երաշխաւորութիւններ։

5—4

ԱՎՍԱՐԳԻՍՕՎԻ

այդին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակի մրգատու ծառեր։ Կայարան ՍԿՐԱ, Անդրկով. երկ., Ավսարգիսովին։ Կասալոգը ուղարկվում է

ԶՐԻ

(Ե. Հ. շ.) 15—12

Электропечатня «ЭКОНОМІЯ» Аваесъ Мутдусіаковъ съ С-ми. Большая Ванкская · т. д. Семинаріи № 3.